կատարեալ կատարելոյն ծնօղ՝ Հայր Որդոյ միածնի և մի տէր միայնոյ. Աստուած յԱստուծոյ՝ կերպարան և պատկեր աստուածութեանն՝ բան գործաւոր. իմաստութիւն պարարական՝ ամենեցուն ընդ լինելութեամբ անկելոցս և զօրութիւն՝ բոլոր էիցս արարող. Որդի ճշմարիտ՝ ճշմարտին՝ անապական՝ անապականին՝ անմահ՝ անմահին՝ մշտնջենաւոր՝ մշտնջենաւորին՝ մի Հոգի Սուրբ Աստուծոյ զէութիւնն ունելով և Որդովն երևեալ մարդկան յայտնապէս՝ կատարեալ՝ կատարելոյ՝ պատճառ կենդանեաց՝ սրբութեան շնորհօղ՝ որով ծանուցանի Հայր՝ որ ի վերայ ամենեցուն և յամենեսին՝ և Որդի Աստուծոյ՝ որով ամենայնք՝ Երրորդութիւն կատարեալ փառաք և մշտնջենաւորութեամբ և թագաւորութեամբ. անբաժանելի՝ անօտարելի՝ ոչ ըստեղծական ինչ և ոչ ծառայական ինչ յերրորդութեանն կամ ի ներքս ածական՝ որպէս թէ յառաջագոյն չէր՝ զկնի ի ներքս ածաւ. զի ոչ երբէք նուազեաց Որդի ի Հօրէ և ոչ ի Հօրէ և յՈրդւոյ Հոգին Սուրբ՝ այլ անփոփոխելի՝ անայլայլելի երրորդութիւնն միշտ՝

Դ ա մ ա ս ո ւ Հ ռ ո մ ա յ. ԺԱ.

Ա յ ս պ է ս հաւատամք և խոստովանիմք ի Հայր և յՈրդին և ի Հոգին Սուրբ՝ Երրորդութիւն անբաժանելի՝ սկիզբն և դադարումն նուազ և առաւել ոչ ունի. Հոգի է Աստուած և խոստովանիմ զերիսն ի միութիւն և զմին յերրորդութեանն. Հայր անծին է և ծնօղ զՈրդի. Որդի ծնունդ և անծին՝ Հոգի ելօղ և դադարումն ի Հօրէ առ Որդի՝ անեղք երեք անձնաւորութիւնք և մի բնութիւն՝

Կ. Վ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈՂԻԿ ԵՍԵՂԵՑԻ

— Հ ռ ո մ մ ի ց բ ա ժ ա ն ո ւ ա ծ եկեղեցիների կրկին միութեան գործը Լևոն ԺԳ. իւր քահանայապետութեան կէտ նպատակին է դարձրել՝ Հռոմմում պապը կազմել է մի պաշտօնական յանձնախումբ 8 ծիրանաւորներից և եպիսկոպոսներից. այդ «սուրբ յանձնախմբի» նախագահն ինքը պապն է՝ Ինչպէս սովորութիւն է այդպիսի յանձնախմբերի անդամներին պապը նշանակում է և գիտնական խորհրդականներ՝ որոնք պէտք է բոլոր խնդիրները մշակեն՝

— Հռոմի աթոռի տարեցուցից տեղեկանում ենք մի քանի հետաքրքրական փաստերի՝ պապական եկեղեցուն վերաբերեալ՝ Այժմեան պապը Հռոմէական քահանայապետների շարքում 263-երորդն է՝ Պապի խորհրդարանն (Collegium) այժմ 62 անդամ ունի (փոխանակ 70-ի)՝ Կարդինալներից ամէնից ծերն է Մարտէզը՝ որ 90 տարեկան է՝ որից յետոյ երկրորդ է կարդինալ Կանոսսան 87 տարեկան՝ իսկ պապը դրանցից յետոյ երրորդն է իւր հասակով (86 տարեկան)՝ Բացի 62 ծիրանաւորներից պապական եկեղեցին ունի 10 պատրիարքութիւններ՝ 815 արքեպիսկոպոսութիւն և եպիսկոպոսութիւն արևմուտքում և արևելքում և 343 եպիսկոպոսութիւնք և արքեպիսկոպոսութիւն ի բաժինս հեթանոսաց (in partibus infidelium): Այժմեան պապը հիմնել է 203 առաջնորդութիւն՝ փոխանորդութիւն և առաքելական նուիրակութիւններ՝

— Աւինիոնի այն պալատն՝ ուր ապրում էին հակաթոռութեան միջոցին պապերը՝ առաջարկուած է Լևոն ԺԳ-ին ի պարգև՝ սակայն պապն ամենևին չի մտածում հեռանալ Վատիկանից՝

— Ֆրանսիայում երրորդ հասարակապետութեան կռիւը եկեղեցու հետ վերջ չունի. հենց որ կառավարութեան զեկն ընկնում է արմատականների ձեռքը՝ անմիջապէս արշաւանքն սկսում է Հռոմի ընդդէմ՝

Բուրժուայի նախարարութիւնը զուտ արմատական լինելով հանդերձ չափաւորութիւն է ցոյց տալիս ամենայն խնդիրներում՝ բայց եկեղեցու վերաբերութեամբ չէ կամենում ոչ մի զիջողութիւն անել՝ Սկսած 1878 թուականից մինչև այսօր հոգևոր վարչութեան նախահաշուից տարեկան 8 միլիոն ֆրանկ պակասացրած է՝ Կառավարութեան կռուելու միջոցներից մէկն էլ այդ է՝ որ կարճելով եկեղեցականների ռոճիկները՝ խեղճացնէ նրանց՝ այս նպատակով է ահա՝ որ 53 /, միլիոն ֆրանկի ծախքն այսօր դարձել է 45 միլ. կրճատման է ենթարկուել մանաւանդ եկեղեցականների ռոճիկը՝ որից պակեցրած է 2՝742՝495 ֆրանկ՝ Ցաւալին այն է՝ եկեղեցինելի շինութեան՝ նորոգութեան և պահպանութեան նախահաշիւն էլ կրճատուած է՝ մինչդեռ այդ գումարն առաջ 3՝150՝000 ֆրանկ էր՝ այս տարի նշանակուած է 1՝800՝000 ֆր.՝ Կաթոլիկ միսիոնի համար այս տարի նշանակուած է 665՝000 ֆր. որ գործ է դրուում ոչ միայն ֆրանսիական օտարերկրեայ եկեղեցիների համար՝ այլ դրանից օժանդակութիւն են ստանում արևելեան Հռոմի հետ միացած եկեղեցիք՝ ինչպէս ասորական՝ հայկական՝ քաղդէական՝ զպտիների և բոլոր արների կաթոլիկ եկեղեցականները՝ Այս ծախքերը կառավարութիւնը չէ կրճատում՝ որովհետև դրա նշանակութիւնն է ֆրանսիական քաղաքական

ազդեցութեան տարածելը։ Այն եկեղեցիք որ օժանդակութիւն են ստանում Ֆրանսիայից, պարտաւորուել են իրենց դպրոցներում ֆրանսերէն ուսուցանելու։

— Ֆրանսիական մի օրէնքի զօրութեամբ, որ հրատարակուած է 1889 թ.։ ծնողները զրկուում են իրենց որդոց վրայ ունեցած իրաւունքից, եթէ նրանց անխնամ թողնեն կամ չարչարեն։ Տարէցտարի այս պատժի ենթարկուողների թիւն աւելանում է. 1891-ին դրանց թիւն էր 806, 1802-ին արդէն 1107։

— Ֆրանսիայում հիմնուել է մի նոր ընկերութիւն հակառակ մասոնութեան. այդ ընկերութիւնը պիտի կոչուի „Labarum" (այսպէս էր կոչուում Կոստանդին կայսեր խաչանիշ դրօշը)։ Ընկերութեանս նպատակն է ամենուրեք կռիւ մղել ընդդէմ մասոնականութեան, որի կազմակերպութեան բոլոր խորհրդաւոր նշանների փոխանակ համապատասխան նշաններ են սահմանուել այս ընկերութեան մէջ։ Անդամներն երեք կարգի են բաժանուում։ ստորին աստիճանն է. «Կոստանդինի Լեգէոնար», երկրորդն է. «զինուոր սրբոյն Միքայէլի» և երրորդն ու վերնագոյնն է. «ասպետ սուրբ սրտի»։ կանանց համար սահմանուած է «Յովհաննա Դ'Արքի քոյրերի» դասը։

— Հասարակական բարեգործութիւնը Ֆրանսիայում ըստ ազգային ժողովի յատուկ մասնաժողովի զեկուցման հետևեալ թուերով է արտայայտուում։ Ֆրանսիայում կայ 15,000 օժանդակութեան գրասենեակներ (Bureaux de bienfaisance), որ պահպանում է երկու միլիոն անձինք՝ 32 միլիոն տարեկան ծախսելով դրանց վրայ և 6 միլիոն ևս վարչական ծախք ունենալով։ Վեց միլիոն վարչական ծախքը շատ մեծ է, եթէ աչքի առաջ ունենանք, որ այդ պաշտօնը պատուոյ պաշտօն է։ Անբուժելի անդամալոյծների հիւանդանոցներում կան 63,000 անկողին։ Այդ հաստատութիւնները խնամում են 26,482 տղամարդ (1,23 ֆր. օրական իւրաքանչիւրի վրայ ծախսելով) և 27,528 կանայք (1,18 ֆր.) 9989 մանուկ (1,02 ֆր. օրական ծախքով)։ Ծերերի ապաստանարանում կան 4,500 զառամեալք, որոնց վրայ ծախսելով օրական 1.50 ֆր. ընդամէնը ծախսուում է 5,463,760 ֆր.։ Ֆրանսիայում մուրացկանութիւնը բառնալու համար պահանջուում է այլ ևս 9 միլիոն ծախք։

— Սպանիական եկեղեցականների դլուխը, ծիրանաւոր Կասկայարէսը իւր խոյր դնելու հանդիսի միջոցին մի ճառ է խօսել, որի մէջ մատնանիշ է արել սպանիական եկեղեցականութեան և զինուորութեան մէջ եղած կապի վրայ։ Ներապատակ ծիրանաւորն ինքը սպանիական բանակի թնդանօթաձիգների սպաներից է։ ինչպէս և սպանիական կայուն զօրաբանակ կազմողը ծիրանաւոր Այսներոսն էր և յիսուսեաններին կարգի հաստատողն ևս մի զինուորական էր։ Իգնատիոս Լոյոլան։ Սպանիայում, ասաց ծիրանաւորը։ հայրենեաց զինուորև Քրիստոսի զինուորլինելը մի և նոյն է նշանակում։ Ինչպէս որ ծիրանաւորի կարմիր խոյրը նրա պատրաստակամութիւնն է յայտնում իւր արիւնը թափելու հաւատի համար։ այսպէս էլ նոյն գլխարկը կարող է նշան լինել նրա հայրենեաց պատուոյ և անկախութեան համար կռուելու։ Հանդիսից վերջը թնդանօթաձիգ զօրքի զօրավարներն ու սպաները մերձեցան ի համբոյր իրենց զինակից ծիրանաւորի աջին։

— Հռովմէական կղերի անհամբերողութեան մի ապացոյց տուաւ վերջերս Էլզասի Վ.իշ գիւղի կաթոլիկ քահանան։ որ մերժեց մի բողոքականի դին կաթոլիկների գերեզմանատանը թաղելու թոյլ տալ և առաջարկեց նրան՝ թաղել ինքնասպանների հանգստարանում։ Քաղաքական իշխանութեան միջամտութեամբ բողոքականին այնու ամենայնիւ թաղեցին գիւղի գերեզմանատեղում։ որի վրայ առաջնորդի կողմից բանադրանք կարդացուեցաւ։ ուստի կաթոլիկ քահանայն այդ գերեզմանոցը մտնելու այլ ևս իրաւունք չունի։

— Բոլղարիոյ իշխան Ֆերդինանդը յոյսը կտրելով առանց ռուսաց Կայսեր հաւանութեան Բոլղարիայում մնալու։ վճռել էր անցեալ տարուան վերջին մի մեծ զոհաբերութիւն անելու։ իր անդրանիկ երկամեայ Բորիս որդուն օրթոդոքս մկրտել տալու։ Նրա այս վճռին ընդդիմութիւն էր ցոյց տալիս իւր ամուսինը, Մարիա Լուիզան։ որ Պարմայի դքսի աղջիկն է։ ինչպէս և իւր ամբողջ ազգականութիւնը։ Ֆերդինանդ իշխանը մի ելք գտնելու համար գիմեց պապին։ որ թոյլտուութիւն ստանայ, անձամբ գնաց պապի գուռը շարժելու համար։ սակայն ի զուր։ Հռովմը երբէք չէ դաւաճանում իւր սկզբունքներին։ Այսու ամենայնիւ Ֆերդինանդը կատարեց իւր ժողովրդին տուած խոստումն և փետրուարի 2-ին Բորիսը օրթոդոքս մկրտուեց բոլղարական էքսարքոսի ձեռքով։ կնքահայրութեամբ ռուսաց Կայսեր յատուկ ներկայացուցիչ իշխան Գոլենիշչև—Կուտուզովի։ Ֆերդինանդը վարձատրուեց իւր այդ քայլի համար և այժմ բոլոր վեց մեծ պետութիւններից ճանաչուած իշխան է Բոլղարիոյ։ Հռովմը յայտնի դադապարտեց նրա այդ քայլն և պապի բերան „Osservatore Romano" նրան

ուրացող է կոչում և Բուլղարիոյ կաթոլիկ եպիսկոպոսը հրամայել է եկեղեցում աղօթքի մէջ այլ ևս չյիշատակել il apostata Ferdinando-ին (ուրացող Ֆերդինանդին)։ Զարմանալի է, որ Լևոն ԺԳ. աւելի խիստ չվարուեց Ֆերդինանդ իշխանի հետ և չբանադրեց նրան, ինչպէս սպասուում էր։ Լրագիրներն հաղորդում են, որ իշխանի ամուսինը մտադիր է բաժանուել նրանից, բայց պապը խորհուրդ չէ տուել նրան այդ քայլն անելու։

—Հռովմայ պապի բերան L'Osservatore Romano լրագիրը հանգանակութիւն է բացել և դրամական նուէրներ է ընդունում ի նպաստ մեր տաճկահայ տառապեալ եղբայրների։ Նուիրատուների անունները և նուիրաբերութեանց չափը իտալական լրագիրը տպագրում է Per l'Armenia (Հայաստանի համար) վերնագրի տակ։ Ի միջի այլոց սոյն փետրուարի 11, № 33-ի մէջ գտնում ենք նոյն վերնագրի տակ եօթն անձանց մի ցուցակ, որից տեսնում ենք որ երկու իտալացի եկեղեցական նուիրել են 100-ական ֆրանկ (lira), երկու դարձեալ իտալացի եկեղ. 50-ական ֆր. և 'րկու հայ կաթոլիկ հոգևորական՝ մէկը—12 ֆր. միւսը—10 ֆր. (Il P. Procuratore dei Padri Mekitaristi Armeni di Venezia և Un Sacerdote armeno cattolico).

ՀԻՆ ԿԱԹՈԼԻԿՆԵՐ.

— Հին կաթոլիկների կրօնական թերթը, որ կոչուում է «Միջազգային աստուածաբանութեան ամսագիր», հրատարակել է գովասանօք Կ. Պոլսի տիեզերական պատրիարքութեան պապին ի պատասխանի գրած հերքման թղթի թարգմանութիւնը, որ մեծ գոհունակութիւն է պատճառել օրթոդոքսներին։

— Հին կաթոլիկների նշանաւոր պարագլուխներից մէկը մեռաւ, Յովսէփ Հուբերտ Ռայնկէնս եպիսկոպոսի մահը, որ մեռաւ յունուարի 4-ին, մեծ կորուստ է հին կաթոլիկների մատաղակազմ եկեղեցու համար։ Ռայնկէնսը ծնուած է 1821 թուին, ուսել էր Բոննի աստուածաբանութեան համալսարանում և դոկտորի աստիճան էր ստացել Միւնխէնում, իսկ 1848 թուի սկզբներին հոգևոր կոչումն էր ստացել։ Իբրև եկեղեցական պատմութեան ուսուցչապետ մեծ հռչակ էր ստացել նա Եւրոպայում, բայց Վատիկանի ժողովի հակառակորդներից լինելով՝ ենթարկուեց Հռովմի հալածանքին, ուստի և Դէօլլինգերի խմբի մէջ մտնելով՝ հին կաթոլիկ եկեղեցու սիւներից մինը դարձաւ։ Քսան և երկու տարի շարունակ հին կաթոլիկների առաջնորդը լինելով՝ նա ամէնքի սէրն ու համբերութիւնը գրաւել էր։ Ռայնկէնսի մահուան վրայ կաթոլիկները չյապաղեցին իրենց ուրախութիւնը յայտնել, այս մասին նշանաւոր է „Osservatore Romano-ի խօսքերը, որ Ռայնկէնսին սուտ եպիսկոպոս է կոչում և առաջնորդ խաւարամիտ և տգէտ եկեղեցականութեան մի մասի, որոնք յանդգնել էին Հռովմի քահանայապետի անսխալականութիւնը չճանաչել։

—Հին կաթոլիկների թիւն այսօր Գերմանիայում հաշուում է 50·000 որ համեմատելով պապականների հետ, 400 պապական կաթոլիկի՝ մի հին կաթոլիկ է գալիս։

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ.

— Յունաց բարձրագոյն հոգևոր վարժարանը, որ գտնուում է Կ. Պոլսում, Խալկի կղզու վրայ, յայտնի է, որ աւերուած է երկրաշարժով։ Այժմեան պատրիարք Անթիմոս Է. գահ բարձրանալու օրուանից առանձին հոգս է տանում այդ դպրոցի վերաշինութեան համար։ Արդէն մեծագումար նպաստներ են ստացուած ամէն կողմերում ապրող յոյներից և դպրոցի վերանորոգութիւնը աւարտելով՝ ուսումը վերսկսուած է այնտեղ։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ.

— Ռուսաց պաղեստինեան ընկերութիւնը հետզհետէ աւելի մեծ նշանակութիւն է ստանում, ռուս ուխտաւորներն այսուհետև այդ ընկերութեան խնամքը պիտի վայելեն և ազատուեն յոյն եկեղեցականների արհամարհանքից. ռուսաց Կայսեր մի առանձին հրովարտակով պաղեստինեան ընկերութեան վրայ պարտք է դրուած հոգալ ուխտաւորների և օրթոդոքս եկեղեցու մասին Երուսաղէմում։

ԱՆՏԻՈՔԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ.

—Այս պատրիարքութեան վիճակը նախանձելի չէ, չնայելով որ Սպիրիդոն պատրիարքը իւր ընտրուած ժամանակ խոստացել է մի բարձրագոյն հոգևոր դպրոց բանալ, բայց ահա երրորդ տարին է, որ դպրոցին յատկացրած շէնքի մէջ պատրիարքի ծառայքն են ապրում և խոստացուած 10·000 լիրան մոռացութեան է տրուած, Ծխական դպրոցներն ևս հետզհետէ փակուում են, որովհետև ժողովուրդը կաթոլիկների ու բողոքականների ձրի դպրոցներն է տալիս իւր որդիքը, նոյն իսկ հին վանական կալուածներն էլ ծախուում են կաթոլիկներին։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ.

— Անցեալ տարի Ալեքսանդրիոյ Սոփրոնիոս

պատրիարքը տօնեց իւր 97-ամեայ ծննդեան տօնը։ Սոփրոնիոս պատրիարքի գործունէութիւնը հազիւ կարողանում է տարածուել Եգիպտոսի վրայ, մինչ ամբողջ սև աշխարհը (Ափրիկէ), որ այժմ կուռոյ խնձոր է Եւրոպացոց մէջ, գրաւել է արդէն կաթոլիկ և բողոքական եկեղեցիներից բազմաթիւ միսիոնարներ։ Նոյն իսկ այս նպատակով է, որ պապը վերջերս Աղեքսանդրիոյ կաթոլիկ պատրիարքութիւն հիմնեց, որի ազդեցութիւնը պիտի տարածուի և Հարէշստանում։

ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

— Նոր Յունական կամ Հելլենական եկեղեցին ևս հեծում է այն մեծ դրամական ճգնաժամի տակ, որին ենթակայ է այդ տերութիւնն ամբողջովին։ Այդ երջանիկ թագաւորութեան մէջ բազմաթիւ թեմեր առանց առաջնորդների են մնացել, որովհետև թեմականների ծախքն հոգալու դրամ չկայ։ Աթէնքի համալսարանում աստուածաբանութեան ամբիոնները թափուր են, որովհետև դրամ չկայ։ Հոգևոր դպրոցները ծխականների շափ էլ ուսում չեն տալիս, որովհետև դրամ չկայ։ Այս բոլոր թշուառութեանց վրայ նորերս աւելացաւ և այդ եկեղեցու պետի, Գերմանոս մետրոպոլիտի մահը։

ՌՈՒՍԱՀԱՅԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

— Յունուար և փետրուար ամիսները բոլորական ազգի և եկեղեցու պատմութեան մէջ դարագլուխ կազմեցին։ Բոլգարիոյ իշխան Ֆերդինանդը փետրուարի 2-ին իւր որդի Բորիսին օրթոդոքս մկրտել տուաւ։ Այս մկրտութեան ժամանակ մեծամեծ հանդէսներ կատարուեցան Սոֆիայում, ուր հասել էր և Ռուսիոյ մեծազօր Կայսեր ներկայացուցիչ իշխան Գոլէնիշչեվ—Կուտուզովը։ Ռուսիան իւր յարաբերութիւնը վերանորոգեց Բոլգարիոյ հետ և վեց պետութիւնները ճանաչեցին Ֆերդինանդին Բոլգարիոյ իշխան։ Մկրտութեան հանդէս է կատարել բոլգարների էքզարքոսը, որ յատկապէս Կ. Պոլսից հրաւիրուած էր։ Ռուսաց մամուլն անսահման հրճուանք արտայայտեց այս առթիւ, միայն «Սանկտպետ. Վեդոմ.» և «Գրաժդանինը» քաջութիւն ունեցան իշխան Ֆերդինանդին յանդիմանութիւններ ուղղելու նրա այդ հակակրօնական գործողութեան մասին։ Նշանաւոր է և էքզարքոսի Բոլգարիա գնալն, ուր նա ութ տարուց ի վեր ոտք չէր դրել։ Օգուտ քաղելով այս առթից «Ցերկ. Վեստ.» խորհուրդ է տալիս տիեզերական պատրիարքին ճանաչել վերջապես բոլգարական էքզարքոսին։ «Բանի որ, ասում է նոյն թերթը, Կ. Պոլսի յոյն և հայ պատրիարքարանների միջև այնքան բարեկամական յարաբերութիւններ կան։ Ինչո՞ւ նոյնը չլինի նոյն եկեղեցու երկու պետերի մէջ»։ Ակադէմիական թերթը մտանում է, որ յունաց պատրիարքի համար բոլգարական էքզարքոսը մի ապստամբ է, մինչ հայոց պատրիարքը՝ պետ մի ինքնուրոյն եկեղեցու։

ՌՈՒՍԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ.

— Յունուարի մեկից արձակուած կայսերական հրովարտակով որոշուած է, որ այս տարի մայիս ամսուան մէջ թագադրութիւն լինի Ն. Կ. Մեծութեանց։ Այս մեծաշուք հանդիսի համար արդէն հրաւէրներ են ուղարկուած ամենուրեք և ինչպէս երևում է Մոսկուայում մի մեծագումար համաշխարհային հանդէս տեղի կունենայ արևելեան շքեղութեամբ։

Թագադրութեան հանդիսի պատճառաւ հրամայուած է արդէն, որ բոլոր դպրոցական հաստատութեանց մէջ ուսումը դադարեցնեն մինչև մայիսի 10։ Այս տարի սովորական քննութիւնների փոխանակ ստորին և միջին դպրոցների աշակերտների փոխադրութիւնները՝ տեղի կունենան տարեկան թուանշաններով, իսկ բարձրագոյն դպրոցների քննութիւնները կը լինին օգոստոսին։

— Շուրջբալթեան գաւառներում օրթոդոքս եկեղեցիների շինութեան համար՝ այս տարուանից որոշուած է տարեկան 50,000 և աւելի ծախսել տասն տարի շարունակ։

— Ֆինլանդիայում ռուսական եկեղեցակառութեան պահպանութեան համար որոշուած է արքունի գանձարանից տարեկան 25,800 ռուբլի ոսկի տալ։

— Ռուս միսիոնարներից մեկը հետաքրքրական փաստ է հաղորդում մալականների մասին։ Սրանց ձեռքն է ընկել ռուսաց գիտութեանց ճեմարանի հրատարակութիւններից մի հատորը, ուր կայ տպուած Հուսի ժամանակ մի ոմն Խելչինսկու հայհոյական գրուածքն ընդդէմ կաթոլիկ եկեղեցու։ Արդ մալականները՝ կարդում են այդ գրուածքը և նրա բոլոր փաստերն և հայհոյանքները վերաբերում օրթոդոքս եկեղեցուն։

— Անցեալ դեկտեմբերի 12-ին ռուսաց եկեղեցու քառասնամեայ նշանաւոր և յայտնի անդամներից մեկի՝ Յոհան Իլիչ Սերգիեւի (Կրոնշտադցու) յօբելեանը տօնուեցաւ։ Այդ անձն այնքան յայտնի է Ռուսաստանում, նոյն իսկ Կովկասում, որ աւելորդ չենք համարում նրա մասին մի քանի կենսագրական տեղեկութիւններ տալու։ Հայր Յոհան (Іоаннъ) Արխանգելսկի նահանգի Սուրա գիւղի մի

հոգևորականի զաւակ է, ծնուած 1829-ին. նա կրթուել է նախ ծխական դպրոցում, ապա հոգևոր դպրանոցում և աւարտել է իւր ուսմունքը Պետերբուրգի հոգևոր ճեմարանում 1851 թուին. Իւր գործունէութիւնը կսկսել է սկսել իբրև հեթանոսաց քարոզիչ, սակայն 1855 թ. քահանայ ձեռնադրուելով նուիրել է իրեն ներքին քարոզութեան գործին. Կրօնշտադ քաղաքում նա քառասուն տարի անդադար գործել է իբրև կրօնուսոյց, քահանայ և քարոզիչ, նրա անունը շուտով հռչակուել է ամբողջ Ռուսիայում, ուր նրան ուղղակի հրաշագործ են անուանում. Ամէնքի յարգանքը վայելել է նա իւր առատ բարեգործութեամբ, որի համար ռուս ժողովուրդը միշտ մեծաքանակ նուէրներ է անում նրան.

Ընդարձակ կայսրութեան ամէն անկիւններից ուխտաւորներ են գնում Կրօնշտադ այդ քահանային տեսնելու և նրան լսելու. նա ամէն օր անհամար նամակներ է ստանում, որի մէջ խնդրում են նորան յիշել իրենց աղօթքի մէջ, նոյն իսկ յուսահատ հիւանդները նրա աղօթքին են ապաւինում և այդ բանի համար մեծ գումարներ են նուիրում. Ամբողջ մի խումբ հետևողներ ունի նա, որ ամէն կողմը հետևում են նրան. Հանգուցեալ Ալէքսանդր Գ. Կայսեր վերջին օրերին կանչուած էր Հ. Յոհան աղօթելու համար. Սերգիեւ քահանան իւր ստացած նուէրներից առատ մասն է հանում աղքատներին, նա է հիմնել Կրօնշտադում առաջին «աշխատանաց տունը», իւր ծախքով մի դպրոց է կանգնել իւր հայրենի գիւղում. Յօբելեանի օրը ահագին բազմութիւն է ժողովուել Կրօնշտադ յարգուած հովուին շնորհաւորելու, եկեղեցական թերթերը առանձին յօդուածներ են նուիրել նորա գործունէութեան.

— «Կիեւի թեմական համբաւարերն» հաղորդում է, որ մի ռուս այրի կին իւր կալուածքն ու 335,000 ռուբլի է կտակել զառամեալ հոգևորականների համար ապաստանարան կանգնելու այդ թեմում.

— Ռուսաց թեմական եկեղեցականների ժողովներում խնդիր է յարուցուել հոգևոր դպրոցներին կից նկարչութեան դասընթացներ հիմնելու համար միջնորդելու. Այդ դասընթացների նպատակն է եկեղեցական պատկերագրութիւնը վերականգնելը. Ահա մի շատ կարևոր խնդիր, որի յարուցման ժամանակը մեզ համար էլ հասել է, որովհետև մեր քաղաքների և գիւղերի եկեղեցիք լի են օտար, անճոռնի և անճաշակ պատկերներով.

— Շուրջբալթեան երկրում օրթոդոքսութեան ոյժ տալու նպատակով անցեալ տարի մի քանի կենդրոններում եկեղեցիք են շինուել և մեծ հանդիսով օծուել. Այդ եկեղեցիներում ժամերգութիւնն և քարոզները երբեմն լինում են տեղական լեզուներով, լատիշերէն և էստոներէն.

— Եկեղեցական—ծխական դպրոցների պահպանութեան գումարի վերայ այս տարուանից պիտի աւելանայ այլ ևս 150,000 ռուբլի.

— Վարշաւայի ռուս եկեղեցականների ժողովը հարկ է համարել խնդիր յարուցանելու, որ ամէն մի զօրագունդ Լեհաստանում ունենայ իւր եկեղեցին և միջոց տուի քահանաներին իրենց արդոց հոգևոր կրթութիւն տալու.

ԱՆԳԼԻԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Հռովմի պապը տեսնելով՝ որ միութեան հրաւէրը ոչ մի հետևանք չունեցաւ Անգլիայում, այժմ ուրիշ ընթացք է բռնել. նա այնպիսի գործեր է անում, որ ցոյց տայ թէ ինքը չէ ճանաչում անգլիկան եկեղեցին. Պապը Անգլիայի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Վոհան եպիսկոպոսին իրաւունք է տուել կրելու Ուեստմինստրի արքեպիսկոպոսութեան զինանշանը, չնայելով որ այդ զինանիշը Քէնտերբերիի եպիսկոպոսինն է և նա է կրում և չնայելով որ Անգլիայում առանձին վարչութիւն կայ, որի իրաւասութիւնն է զինանիշներ կրելու թոյլ տալը. Ուեստմինստրն այժմ ամբողջովին անգլիկան եկեղեցու ձեռքին է, բայց պապը ոչինչ չէ կամենում ճանաչել. Ծիրանաւոր Վոհանի նոր զինանիշը մի փոփոխութեան է ենթարկուել, փոխանակ կապոյտ տեղի, նա կարմից պիտի լինի ի նշան այն արեան, որ թափել են կաթոլիկները Անգլիայում.

—Անգլիական եկեղեցական „Christian World" թերթի ամէն մի համարում բազմաթիւ համակրութեանց և ցաւակցութեանց ժողովների մասին ենք կարդում, որ տեղի են ունենում թշուառացած Տաճկահայոց համար. Նոյն թերթի մէջ տպագրուած է մի աղօթքի հրաւէր, որի տակն ստորագրել են անգլիական եկեղեցիների ամենամեծ անուները. Այդ թղթով Անգլիոյ եկեղեցականները հրաւիրում են բոլոր քրիստոնեաներին աղօթել նահատակ հայերի համար. Այս հրաւէրն արձագանք է գտել Եւրոպայում, ուր գերմանական թերթերից „Die Christl. welt" և Allgem. Evangel.—Luth. Kirchenzeit." արտատպել են այդ. Ինչպէս մեզ հաղորդում են, Լայպցիգ քաղաքի բողոքական եկեղեցիք կիւրակի օրերն աղօթք են սահմանել հայոց համար և ստորագրութիւններ են ժողովում գերմ. կայսեր մատուցանելու, որ պաշտպան կանգնէ հալածուած հայերին. „Christl. Welt" թերթի խմբագրութիւնն ստորագրութիւն է բացել յօգուտ կողոպտուած և աղքատացած հայերի.

Ն. Ք.